Արձանագրություն N 2
ՋԿ-ԳՀԽԾՁԲ-26/2-Տ ծածկագրով գնանշման հարցման
ընթացակարգի գնահատող հանձնաժողովի
բացման նիստի

ք. Երևան 13 ապրիլի 2026թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Ասրյանը (ԳԱՊ)
Հանձնաժողովի անդամներ՝ Կ. Սարգսյանը, Ս. Աբազյանը, Ս. Ալեքսանյանը և Լ. Իվանյանը:
Քարտուղար՝ Կ. Քոչարյանը:

Հայտերի բացման վերաբերյալ

Ջրային կոմիտեի 2026թ. կարիքների համար՝ Կոլեկտորադրենաժային ցանցերի պահպանում և շահագործում աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման ***ՋԿ-ԳՀԽԾՁԲ-26/2-Տ*** ծածկագրով մրցույթի հայտերը էլեկտրոնային ձևով www.armeps.am կայքի միջոցով բացվել են 2026 թվականի ապրիլի 07-ին, ժամը 16:00-ին /հրապարակվել է 2026 թվականի մարտի 31-ին:

ՋԿ-ԳՀԽԾՁԲ-26/2-Տ ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնման հայտ է (են) ներկայացրել հետևյալ մասնակիցը (ները)

Մասնակցի անվանումը		հասցե, հեռ., էլ. հասցե
1	<<Ռիջիդ>> ՍՊԸ	ՀՀ Գեղարքունիքի մարզ գ. Գեղամավան 2-րդ փ. 3-րդ նրբ. 25 տ. հեռ. 093-35-57-87 էլ. հասցե rigidalgroup@gmail.com
2	<<ԱՍ ՔՈՆԹՐՈԼ>> ՍՊԸ	ք. Երևան Մ. Մաշտոցի պող. /Շ/ 60 գրասենյակ 6 հեռ. 093-74-11-88 էլ. հասցե ascontrol.llc@gmail.com
3	«Գրիտիգ» ՍՊԸ	ՀՀ Արարատի մարզ գ. Ուստան, Թահրեյան 14 հեռ. 043-60-00-90 էլ. հասցե gritig@inbox.ru

Տեղեկություններ մասնակիցների կողմից առաջարկված գների վերաբերյալ

ՀՀ դրամ

	Մասնակիցների անվանումը	**նախահաշվային արժեք (ԱԱՀ-ն ներառյալ) 3 200 000**		
		Առանց ԱԱՀ	**ԱԱՀ**	**Ընդհանուր գին**
1	«Ռիջիդ» ՍՊԸ	1 480 000	-	1 480 000
2	«ԱՍ ՔՈՆԹՐՈԼ» ՍՊԸ	2 368 000	-	2 368 000
3	«Գրիտիգ» ՍՊԸ	2 500 000	-	2 500 000

Մասնակից(ներ)ի կողմից ներկայացված բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայությունը և դրանց համապատասխանությունը հրավերի պահանջներին

ՋԿ-ԳՀԽԾՁԲ-26/2-Տ ծածկագրով ընթացակարգի մասնակից «Գրիտիգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում են՝ հրավերով պահանջվող «Պիտանելիության չափորոշիչ» որակավորման չափանիշով սահմանված լիցենզիայի ներդիրը՝ բնօրինակից սկանավորված, «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշով սահմանված՝ իր կողմից հաստատված տեղեկանքը՝ կնքվելիք պայմանագրի կատարման համար մասնակցի կողմից առաջարկվող աշխատակազմի մասին՝ համաձայն Հավելված N 1.3-ի և կից աշխատանքային ռեսուրսների առկայությունը հիմնավորող փաստաթղթերը: «Մասնագիտական փորձառություն» որոկավորման չափանիշը հիմնավորելու համար «Գրիտիգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված նմանատիպ կատարված պայմանագիրը չի համապատասխանում հրավերի 2.4.1 կետով պահանջվող պայմաններին (Նմանատիպ են համարվում հիդրոտեխնիկական կառուցվածքների կամ կառուցման, կամ ամբողջական կամ մասնակի վերակառուցման, կամ ամբողջական կամ մասնակի ուժեղացման, կամ ամբողջական կամ մասնակի հիմնանորոգման աշխատանքների նկատմամբ մատուցված տեխնիկական հսկողության ծառայությունը՝ հրավերով պահանջվող լիցենզիայի և ներդիրների շրջանակներում):

Մասնակից «ԱՍ ՔՈՆԹՐՈԼ» ՍՊԸ-ի հայտով Հրավերով «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշով սահմանված պահանջվել է 3 մասնագետ, մասնակիցը ներկայացրել է միայն մեկ մասնագետ:

Հանձնաժողովի որոշումը

ՋԿ-ԳՀԽԾՁԲ-26/2-Տ ծածկագրով ընթացակարգի մասնակիցների կողմից հայտով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց.

13.04.2026թ. հրավիրված գնահատող հանձնաժողովի նիստի արդյունքներով՝

Համաձայն Հրավերի 8.9 և 8.10 կետերի՝ մեկ աշխատանքային օրով կասեցնել հանձնաժողովի նիստը՝ առաջարկելով մասնակիցներ «Գրիտիգ» ՍՊԸ–ին և «ԱՍ ՔՈՆԹՐՈԼ» ՍՊԸ-ին՝ մինչև կասեցման ժամկետի ավարտը՝ այն է 14.04.2026թ. ներառյալ շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա, 400 սենյակ:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

Գնահատող հանձնաժողովի՝

Նախագահ		Ս. Ասրյան
անդամներ		Կ. Սարգսյան
		Ս. Աբազյան
		Ս. Ալեքսանյան
		Լ. Իվանյան
Քարտուղար		Կ. Քոչարյան